ՀՐԱՀԱՆԳ

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 1934 ԹՎԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ-ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՅԵՎ ԲՐԻԳԱԴԱՆԵՐԻՆ ՈՒ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐԻՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԵՈՒՂՀՐԱՏ 1933 ԵՐԵՎԱՆ

Հանձնված է արտադրության 1933 թ. դեկտ. 21-ին
Ստորագրվել է տպագրելու 1933 թ. դեկտ 26-ին:
Պատվեր № 559 տիրաժ 2200 գլավլիտ 9021

ՅԵՐԵՎԱՆ. ԳՅՈՒՂՀՐԱՏԻ ՏՊԱՐԱՆ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 50.

II-281349

334.6:63

30 JAN 2018

ՀՐԱՀԱՆԳ

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ 1934 ԹՎԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ-ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԼԱՆՆԵՐԸ ԿԱԶՄԵԼՈՒ ՅԵՎ ԲՐԻԳԱԴԱՆԵՐԻՆ ՈՒ ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐԻՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Արտֆինպլանները կազմելու աշխատանքներին ժամանակին նախապատրաստվելու և կազմակերպված ձևով գլխավորելու նպատակով, յուրաքանչյուր կոլխոզում պետք է կազմակերպված լինեն պլանային—օպերատիվ խմբակներ կոլխոզականներից՝ կոլտնտեսության նախագահի ղեկավարությամբ: Այս խմբակի վրա դրվում են հետևյալ պարտականությունները.

ա) Շրջհողբաժնից և ՄՏԿ-ից ստացված առաջադրանքների մշակումը:

բ) Արտադրական բոլոր միջոցների հայտնաբերումը և ճշտումը:

գ) Արտադրանքի նորմաների վերանայումը, մշակումը (օրինակելի արտադրանքի նորմաների հիման վրա), գործարքային գնահատումները, յելնելով նախորդ տարիների լավագույն կոլխոզնիկների փորձից:

դ) Ֆինանսական միջոցների ճշտումը (յեթե տարեկան հաշիվը պատրաստ է՝ նրանով, իսկ յեթե վոչ՝ արագացնել վերջինիս կազմելը) և այլն:

———

Շրջհողբաժինները և ՄՏԿ-ները, վորտեղ գործում են այդպիսիք, արտֆինպլանների կազմելու ժամանակ պետք է ապահովեն բոլոր տեսակի ստուգիչ առաջադրանքների իջեցումն ըստ կոլխոզների, յելնելով յուրաքանչյուր կոլխոզի արտադրական թեքումից, կոլխոզի ունեցվածքից (կազմը, հողային տերիտորիան, ոռոգման հնարավորությունը, հիմնական արտադրական միջոցները և այլն):

Վորպես ստուգիչ առաջադրանքներ պետք է տրվեն հետևյալները.

1. Բոլոր հիմնական կուլտուրաների, ցանքի և տնկիների պլանները։

2. Հիմնական մշակույթների բերքատվությունը։

3. Հողբաժնի կողմից հաստատված ցանքաշրջանառությունը։

4. Անասնապահության շարժումը։

5. Ագրո-զոովետ. կանոնները։

6. Պետության հանձնվելիք մթերքների պլանները։

7. Հնարավոր վարկերի լիմիտը։

8. Կադրերի պատրաստման և վերապատրաստման մասին և այլն։

9. Տրակտորով կատարվող աշխատանքների չափը։

10. Տրակտորային աշխատանքների ժամկետները։

11. Վառոդման մանր ցանցի վերակառուցման համար պահանջվող աշխատանքները։

Սրանց հետ միասին հողբաժինները պետք է ինչ ցնեն կոլխոզներում կատարվելիք հողաշինարարական զանազան աշխատանքների պլանը, ավարտեն նոր ընդունված կոլխոզնիկների հողերի առանձնացումը և այլն։ Այն կոլխոզներում, վորտեղ այդպիսին չի արված, կազմել նրանց հողամասերի սխեմատիկ քարտեզը։

Այս բոլոր արտադրական առաջադրանքները դրվում են կոլխոզի արտադրական խորհրդակցության քննությանը, ընդգրկելով կոլխոզի վողջ ակտիվը, վորից հետո քննարկում է կոլխոզ վարչությունը և վերջնականապես հաստատվում է կոլխոզի ընդհանուր ժողովում։

Այս բոլոր նախապատրաստական աշխատանքները պետք է կատարվեն մինչ արտֆինպլանների կազմելը։

Ինչպես արտֆինպլանները, այնպես և բրիգադների ու ապրանքային ֆերմաների արտադրական առաջադրանքները կազմվում են մեկ տարվա համար, սկսած 1934 թ. 1-ից հունվարի մինչև 1935 թ. 1-ը հունվարի։

Մշակված ձևերը՝ արտֆինպլանը, բրիգադների և ապրանքային ֆերմաների առաջադրանքները, կազմված են պարզեցված և այնպիսի հաջորդականությամբ, վորը հնարավորություն է տալիս

վողջ կոլխոզ ակտիվին անմիջականորեն մասնակցել նրանց կազմելու գործին։

Անհրաժեշտ է նախազգուշացնել, վորպեսզի չկրկնվեն անցյալում տեղի ունեցող այն սխալները, յերբ կոլխոզվարչությունները և ագրոնոմները այդպիսիք կազմում էին կաբինետային կարգով, առանց կոլխոզնիկների մասնակցության։ 1934 թ. արտֆինպլանները պետք է կազմվեն կոլխոզնիկների ակտիվ մասնակցությամբ, անպայմանորեն քննարկվեն բրիգադների արտադրական խորհրդակցություններում և հաստատվեն կոլխոզի ընդհանուր ժողովի կողմից։

Արտֆինպլանների կազմելու հետ և միաժամանակ պետք է վերանայել կոլխոզի բրիգադների կազմը (ի հարկե այն դեպքում, յերբ անհրաժեշտ կլինի բրիգադը լրացնել կամ այլ փոփոխությունների յենթարկել)։

Ինչպես արտֆինպլանների, նույնպես և բրիգադների առաջադրանքների կազմելու հիմնական խնդիրը պետք է լինի մշտական արտադրական բրիգադի ամրապնդումը։

Հողորգանները և ՄՏԿայանները պետք է ապահովեն արտադրական բրիգադների կազմակերպելու խնդրի քննարկումը կոլխոզի արտադրական խորհրդակցություններում և վարչության ու ընդհանուր ժողովներում։

Պլանի զանազան հատվածները կազմելու ժամանակ պետք է հիշել, վոր աղյուսակներում լրացվող բոլոր ավյալները պետք է կապակցվեն միմյանց հետ, և վորևե փոփոխություն մտցնելիս նկատի ունենալ համապատասխան մյուս աղյուսակները։

Արտֆինպլանները կազմվում են յերկու օրինակից.—նրանցից մեկը մնում է կոլխոզում, 2-րդ օրինակը՝ Հողբաժնում, իսկ ՄՏԿ-ի սպասարկման շրջաններում, 2-րդ օրինակը մնում է ՄՏԿ-ներում։

Բրիգադների և ապրանքային ֆերմաների արտադրական առաջադրանքները կազմվում են մեկական օրինակից և մնում են կոլխոզում։

Արտֆինպլանները և բրիգադի առաջադրանքները կազմելու վերջնական ժամկետ է տրվում մինչև 1934 թ. փետրվարի 1-ը։

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ—ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԼԱՆԸ ԿԱԶՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ԱՂՅՈՒՍԱԿՆԵՐԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Արտադրական-ֆինանսական պլանի շապկի վրա մանրա-

ման գրել կոլխոզի լրիվ անունը, տիպը (արտել, կոմմունա, հողագործական ընկերություն), արտադրական ուղղությունը և այլն։

I ՀԱՏՎԱԾ

«ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ»

Պարզվում է կոլխոզի բնակչության կազմը, աշխատունակների առկայությունը, դրանցից արտադնացության մեջ զբաղվողները յերկար ժամանակով, պետական և հասարակական որդաններում հիմնական աշխատանքի, սովորելու, կարմիր բանակում և այլն։

Չափահասներ համարվում են 16 տարեկանից բարձր կանայք և տղամարդիկ, իսկ պատանիներ՝ 12—16 տարեկանները։

Առկա յեղած կոլխոզնիկներից կոլխոզը հայտնաբերում է վորակավորված կոլխոզնիկներին։

II ՀԱՏՎԱԾ

«ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՀՈՂԱՅԻՆ ՏՆԵՏՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ԸՍՏ ՀՈՂԱՏԵՍՔԵՐԻ»

Լրացվում կոլտնտեսության և Հողբաժնի տվյալների հաշվայն. «վարելահող ջրովի և անջրդի» սյունակում, անպայման մատնանշվում և առանձին-առանձին, տվյալ վարելահողից վորքանը հարմար է տրակտորային սպասարկման համար, իսկ «ջրովի և անջրդի խոտհարքների» սյունակում՝ վորքանը հարմար է տրակտորային բերքահավաքի համար։

Պղատու և խաղողի այգու նկատմամբ «վոչ պտղաբեր» արտահայտությունը (7 և 9 սյունակներում) պետք է հասկանալ նոր տնկված յերիտասարդ այգի, վորը դեռ պտուղ չի տալիս։ 6-րդ և 8-րդ սյունակներում «Պտղաբեր» բառի տակ պետք է հասկանալ բոլոր մեծացած այգիները։

Այն սյունակներում, վորոնց համապատասխան որյեկտը կոլխոզը չունի, պետք է անպայման դիծ քաշել։

Նույն ձևով պետք է վարվել նայեվ պլանի հաջորդ տախտակներում, բոլոր նման դեպքերում։

Պղատու ծառերից և այգիներից ցույց է տրվում, թե վորքանը պտղաբեր են։

Յեթե կոլխոզը կապալով և վերցնում խոտհարք և արոտներ պետ ֆոնդից, այդպիսիները գրվում են 35 և 36 սյունակներում։

III ՀԱՏՎԱԾ

ՑԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ

Նշանակվում է կոլխոզի կոկմից ընդունված և Շրջհողբաժնի կողմից հաստատված ցանքաշրջանառությունը, ցույց է տրվում դաշտերի թիվը և կուլտուրաները, նրանց հերթականությունը։

Ցանքաշրջանառությունը պետք է կազմված մշակված լինի կոլխոզնիկների կողմից, Հողբաժնից կամ ՄՏԿ-ից ուղարկված հատուկ բրիգադի հետ (ագրոնոմ, հողաշինարար, հիդրոտեխնիկ և այլն) և հաստատված լինի ընդհանուր ժողովի ու ՄՏԿ-ի ու Հողբաժնի կողմից։

Այն կոլխոզներում, վորտեղ դեռ ցանքաշրջանառություն չի անցկացվում, այս հատվածի վերևի մասը ջնջվում է, իսկ ներքևի տակը լրացվում է, այս դեպքում դաշտերի №№-ները պետք է հասկանալ, վորպես կոլխոզի սառնաներ։

IV ՀԱՏՎԱԾ

ԴԱՇՏԱՅԻՆ ՅԵՎ ԲԱՆՋԱՐԱՆՈՑԱՅԻՆ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՑԱՆՔԻ ՊԼԱՆԸ

Այս աղյուսակը լրացվում է Հողբաժնի և ՄՏԿայանի կողմից տրված առաջադրանքների հիման վրա, վորպիսիք ընդունել է կոլխոզը։ 1-ին սյունակում գրվում են այն կուլտուրաների անունները, վորոնք ընդունված են ցանելու համար 1933 թ. գարնանը և 1934 թ. աշնանը։

Բամբակի ցանքի համար գրվում են առանձին-առանձին ամերիկական, յեգիպտական։ Սերմացուների համար կատարվող ցանքը մատնանշվում է առանձին։

Առանձին գրվում է նայեվ հատուկ նպատակով (որինակ՝ սիլոսի համար) կատարվող ցանքերը, կամ առանձին նշանակություն ունեցող ցանքերի (որինակ՝ Ուկրայինական)։

3-րդ սյունակում ըստ կուլտուրաների ցույց տալ, թե ցանքից վորքան և կատարվելու ցրտահերկի (աշնանահերկի) և վորքան՝ գարնան վարի վրա։

Սերմացվի դնում (10 և 11-րդ սյունակ) նախատեսվում է այն տեխնիկական և բանջարանոցային կուլտուրաների և խոտաբույսերի համար, վորոնցից սերմֆոնդ չի առանձնացվում (բամբակ, ծխախոտ և այլն), կամ 1933 թ. այդ կուլտուրան չի ցանվել կոլտնտեսությունում կամ այլ վորևե պատճառով այդ սերմացվից կոլխոզը չունի։

12-րդ և 13-րդ սյունակները լրացվում են այն կուլտուրաների նկատմամբ, վորոնց համար շիթիլ է մշակվում տվյալ կոլխոզում։

V ՀԱՏՎԱԾ

ԲԱՋՄԱՄՅԱ ՏՆԿԻՆԵՐԻ ՏՆԿՄԱՆ ՊԼԱՆԸ

Կազմվում է IV հատվածի ձևով։

VI ՀԱՏՎԱԾ

ՄՏԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԵԼԻՔ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԼԱՆԸ

Այս բաժնում լրացվում են այն բոլոր աշխատանքները, վորոնք պիտի կատարի ՄՏԿ-այանը տրակտորային քաշող ուժով՝ իր պլանի համաձայն։

2-րդ և 7-րդից մինչև 12-րդ սյունակներում տրվում է ՄՏԿ-ի կողմից կատարվող բոլոր աշխատանքները, ըստ կոլտնտեսության բրիգադների։

5-րդ սյունակում ցույց տալ բնավարձի վճարման %%-ն ըստ առանձին աշխատանքների, ՄՏԿ-ի հետ ունեցած պայմանագրի համաձայն։

6-րդ սյունակում ցույց տալ աշխորերի ընդհանուր քանակը, վորը հանում է ՄՏԿ-ի տրակտորիստներին, ամբողջ տարվա ընթացքում կոլխոզում կատարվելիք աշխատանքների համար, ՄՏԿ-ի կողմից մշակված արտադրանքի նորմաների համաձայն։

Աղյուսակի վերջում պետք է ցույց տրվի ըստ կուլտուրաների ՄՏԿ-ին հանձնվելիք բնավարձի քանակը, համաձայն կատարվելիք աշխատանքների։ Հաշվարկը կատարվում է ըստ առանձին կուլտուրաների սահմանված %%-ով, վորպիսին հասնում է ՄՏԿ-ին առանձին աշխատանքների կամ աշխատանքների կոմպլեքսի համար։ Բերքատվությունն ընդունվում է տվյալ կոլխոզի համար սահմանված նորմաներով։

Այստեղ միաժամանակ պիտի նշել դրամական այն գումարը, վորը հասնելու է ՄՏԿ-ին, այն ձեռնարկումների համար, վորոնց համար դրամով է վարձատրվելու։

VII ՀԱՏՎԱԾ

ԲԵՐՔԱՏՎՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ ԿԻՐԱՌՎԵԼԻՔ ՀԱՏՈՒԿ ԱԳՐՈՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԸ

Այս հատվածում թվարկում են այն ագրո-ձեռնարկումները վորոնք կիրառվում են մեկ կամ մի քանի կամ բոլոր կուլտուրաների նկատմամբ։ Այդպիսի ձեռնարկումներ են հանդիսանում սերմացուները, ախտահանումը, պարարտացումը, քարերից արտը մաքրելը, շարքացանքը, կուլտիվացիան, բշատումը և այլն։

6-րդ սյունակում ցույց են տրվում տվյալ ագրո-ձեռնարկումի համար պահանջվող վորակական ցուցանիշները—պարարտանյութի նորման, կամ նրա հողի հետ խառնելու համար կատարվող վարի խորությունը և այլն։

VIII ՀԱՏՎԱԾ

1934 Թ. ՊԱՐԱՐՏԱՑՄԱՆ ՊԼԱՆԸ

Առաջին սյունակում թվարկել այն բոլոր տեսակի պարարտանյութերը, վորպիսիք նախատեսվում են գործադրել տվյալ կոլխոզում (գոմաղբ—սուպերֆոսֆատ, ծծմբաթթվական ամոնիում և այլն) 1934 թ.։

2-րդ, 3-րդ և 4-րդ սյունակներում յուրաքանչյուր տեսակի պարարտանյութի դիմաց մեկ կամ մի քանի տողով մատնացույց անել այն կուլտուրաները և հողակտորների անունները կամ համարները և տարածությունը (հեկտարներով), վորոնք պետք է պարարտացվեն։

IX ՀԱՏՎԱԾ

ՄԵԼԻՈՐԱՏԻՎ ՅԵՎ ՋՐԱՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Այս հատվածում նախատեսել 1934 թ. ընթացքում կատարվելիք ամբողջ մելիորատիվ և ջրաշինարարական ձեռնարկումները։ Միջոցառումների տրված թվարկումը տրված է վոչ լրիվ և վորպես որինակ, այլ աշխատանքներ լինելու դեպքում այդպիսիները պիտի լրացնել։

Վոռոգման ցանցի վերակառուցման դեպքում այդ բաժինը լրացվում է ՄՏԿ-ի հիդրոտեխնիկի կողմից ներկայացրած պրոյեկտով, ըստ վորում հնարավոր է նախատեսել նայիվ նոր մանր վոռոգման ցանց։ Այնտեղ, վորտեղ կա վոռոգման ցանց և նրա խուսությունը խանգարում է տրակտորային աշխատանքներին, այդպիսի դեպքում պետք է ձեռնարկել վոռոգման ցանցի վերակառուցման։

Այս ձեռնարկումների ժամկետները հարմարեցնել համեմատաբար պակաս բեռնվածության աշխատանքների ժամանակ (հունվար, փետրվար, մարտ, ոգոստոս) բամբակացան շրջաններում։

Բրիգադների արտադրական առաջադրանքները կազմելու

ժամանակ անհրաժեշտ է հաշվի առնել ավյալ աշխատանքների համար պահանջվող բանվորական ձեռքերի թիվը։

X ՀԱՏՎԱԾ

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊԼԱՆԸ

Անասունների զարգացման պլանը պետք է կազմել պետության պլանային առաջադրանքների կիրառման և անասունների հոտի ընդլայնած վերարտադրության խնդիրների տեսանկյունով։ Առաջադրված խնդիրների կենսագործման համար կոլխոզներից և նրա բրիգադներից պահանջվում է ուշադրություն բևեռել բեղմնավորման կամպանիայի, ստերջության տոկոսի իջեցման և մատղաշների խնամքով պահելու խնդիրների շուրջը։

Ցեղնելով վերոհիշյալից, անասնակերի հաշվարկը կատարել, այն հաշվով, որ ապահովի արտադրական առաջադրանքների կատարումը և գերակատարումն անասնապահության ընդլայնած վերարտադրության և պետության հանձնվելիք մթերքների (միս կաթ, բուրդ և այլն) խնդրում։

Աղյուսակը ցույց է տալիս անասունների առկայությունը տարեսկզբին, որը վերաբերում է ամբողջ համայնացված հոտին (նայել ապրանքային ֆերմաներում 2-րդ և 3-րդ սյունակները)։

1-ին սյունակում գրվում է տեսակը (խոշոր յեղջերավոր՝ անասուններ, ձիեր, խոզեր և այլն) և առանձին տեսակների խմբերն ըստ տարիքի։ Անասունների տեսակներն ու խմբերը գրել իրար տակ հետևյալ կարգով ու հաջորդականությամբ.

1. Տավար ա) Ցեղ, ցուլ, աշառ, կով, յերինջ, եգ հորթ 1-ից մինչև 2 տարեկան, մոզի 1-ից մինչև 2 տարեկան, հորթեր մինչև մեկ տարեկան։

բ) Գոմեշ.—Լծկան, գոմեշի ցուլ, արու գոմշաձագ 3—4 տարեկան, մատակ, եգ գոմշաձագ 3—4 տարեկան, արու գոմշաձագ 2—3 տարեկան, եգ գոմշաձագ 2—3 տարեկան, արու գոմշաձագ 1—2 տարեկան, եգ գոմշաձագ 1—2 տարեկան, յերկու սեռի գոմշաձագ մինչև 1 տարեկան։

2. Վոչխար.—Ոչ, մաքի (մայր վոչխար), ամորձատածներ եգ թոխլի, արու թոխլի։

բ) Նեռի (թաքյա—արտադրող այծ), մայր այծ, չափիկ, դէբռ, արու ուլեր, եգ ուլեր։

3. Խոզեր.—Վարազ, մերուն, արու գոճի 4—9 ամսական, եգ գոճի 4—9 ամսական, գոճիներ մինչև 4 ամսական հասակը։

4. Ձիեր. Հովատակ, դամբիկ, ամորձատածներ, արու մատղաշ 2-ից մինչև 3 տարեկան, եգ մատղաշ 2-ից մինչև 3 տարեկան, մատղաշ 1—2 տարեկան, մտրուկներ (քուռակներ) մինչև 1 տարեկան։

2-րդ սյունակում ցույց է տրվում առկա յեղած անասունների թիվը տարեսկզբին, վորի մեջ նայել ֆերմաները։

4-րդ սյունակում ըստ անասունների տեսակների հորթեր, մտրուկներ, գառներ և այլն, տողերի դիմաց գրվում է սպասվելիք սերունդը, համաձայն ունեցած հղի մայրերի։

Նոր սերնդի ստացման, խնամքի և պահպանման խնդիրների շուրջը կոլխոզը պետք է ձեռք առնի վճռական միջոցներ, այն հաշվով, վոր ամբողջ մատղաշի քանակությունը զերծ պահի կորուստներից։

Նույն սյունակում ցույց է տրվում ստորին խմբերից ավյալ խումբը փոխանցվող անասունների թիվը՝ հաշվի առնելով յուրաքանչյուր դեպքում փոխանցվող անասունների թե սեռը և թե տարիքը, որինակ՝ մինչև 1 տարեկան հորթերի մի մասը (արուները) տարվա ընթացքում կփոխադրվի մոզիների խումբը, փոկ մյուս մասը (եգերը) 1—2 տարեկան եգ հորթերի խումբը։ Նույնպես 1—2 տարեկան արու հորթերը տարվա ընթացքում կփոխադրվեն աշառների կամ ցուլերի խումբը, 1—2 տարեկան եգ հորթերը՝ յերինջների խումբը, յերինջները՝ կովերի խումբը և այլն։

Այս տախտակն ավելի հեշտ և ճիշտ կազմելու համար նպատակահարմար է աղյուսակի 1—3 սյունակները վերևում թված կարգով լրացնելուց հետո հաջորդ սյունակները (4—9) լրացնել ներքևի խմբից սկսելով և բարձրանալով դեպի վեր։ Որինակ՝ տավարի նկատմամբ լրացնել հորթեր մինչև 1 տարեկան, ապա՝ 1—2 տարեկան մոզի, 1—2 տարեկան եգ հորթեր և վերջացնել կովի, ցուլի և յեզի խմբերով։

5-րդ սյունակ «Պետության հանձնելու» լրացվում է անասունների քանակն ըստ տեսակների և տարիքի, ի հաշիվ խոտանման (արտադրական նպատակների համար անպետք) և նախքի նորոգող կազմից (ремонт) դուրս գտնվող անասունների (ավելորդ մոզիներ, արու գառներ և այլն)։ Խոտանումը պետք է ապահովի հոտի կանոնավոր կազմը (ստրուկտուրան) և մյուս կողմից պետական պարտավորությունների լրիվ կատարումը։

6-րդ սյունակում պետք է արտահայտվի կոլխոզի

ոժանդակությունը կովազուրկ կոլտնտեսականներին հորթեր վաճառելու խնդրում, տալով նրանց անհատական ոգտագործման համար նախրի կազմը նորոգելուց հետո մնացած մատղաշներից, յելնելով կոլտնտեսության հնարավորություններից։

7-րդ սյունակում ցույց տալ ցեղական արտադրողների և այլ խմբի անասունների գնումը հոտի լրացման նպատակով։

8-րդ սյունակում մատնանշվում է ամբողջ անասնակազմը 1934 թ. վերջին։ Այս սյունակում մատնանշված անասնակազմի պահպանման համար պետք է ձեռք առնել նրանց վերարտադրման և պահպանման վերաբերյալ մի շարք միջոցառումներ, հետևելով հոտի կարգավորմանն ըստ խմբերի։

Այս սյունակի (8-րդ) տվյալները ստացվում են յուրաքանչյուր տարիքային խմբի համար 2-րդ, 4-րդ և 7-րդ սյունակների թվերի գումարներից հանելով 5-րդ և 6-րդ սյունակների թվերը և այդ խմբից բարձր խումբ փոխադրվող անասունների քանակը (4-րդ սյունակի համաձայն)։ Վերջին թիվը (բարձր խումբ փոխադրվածները) վերցվում է համապատասխան բարձր խմբի (կամ խմբերի) դիմաց գրված թվերից։

3-րդ և 9-րդ սյունակների տվյալները (նույն թվում պետ. ֆերմաներում) պետք է համապատասխանեն ֆերմային տրված առաջադրանքներին։

XI ՀԱՏՎԱԾ

ԱՆԱՍՆԱԲՈՒԾԱԿԱՆ ՅԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Կետ 1-ին. զուգավորման կամպանիա. 1934 թ. զուգավորման կամպանիայի կազմակերպման և անցկացման շուրջ մոբիլիզացիայի յենթարկել կոլխոզակտիվի վողջ ուշադրությունը, որպես տնտեսական-քաղաքական խոշոր նշանակություն ունեցող խնդիր, անասնապահության վերարտադրման գործում։ Պետք է ապահովել ամբողջ հոտի մայրական կազմի 100%-ային ծածկումն առաջին հերթին ցեղական արտադրողներով կազմակերպելով ձեռքի բեղմնավորում։ Միաժամանակ հայտնաբերել հավանություն ստացած տեղական արտադրողներին և հատուկ հսկողությամբ ամրագրել անպետքներին։

Սերջության տոկոսի մինիմումի իջեցնելը և արտադրողների ու մայրական կազմի նկատմամբ առանձնահատուկ ուշադիր խնամքի կազմակերպումը նույնպես պետք է կոլխոզների և ֆերմաների ուշադրության կենտրոնում դրվի։

Այս հատվածի 2-րդ մասում մատնանշված են կոլխոզի կողմից ձեռք առնվող «ուրիշ միջոցառումները»՝ նախրի ամբողջ կազմի պահպանումը, տնտեսության մթերատվության և ապրանքայնության բարձրացումը (սրսկումներ, ախտահանում, լրացուցիչ կերակրում խտացրած կերերով, անասնաբուժական-անասնաբուժական արոտային մինիմում և այլն)։

XII ՀԱՏՎԱԾ

1934—35 Թ. ԱՆԱՍՆԱԿԵՐԻ ՊԼԱՆԸ

Կերերի հաշվառքը կատարվում է 1934 թվի հունվարի 1-ից մինչև 1935 թ. նոր բերքը ժամանակաշրջանի համար, ըստ վորում այդ ժամանակաշրջանը բաժանվում է յերկու մասի. առաջին՝ 1934 թ. հունվարի 1-ից մինչև 1934 թ. նոր բերքը, իսկ 2-րդը՝ 1934 թ. նոր բերքից մինչև 1935 թ. նոր բերքը։

1-ին ժամանակաշրջանի համար պետք է հաշվի առնել առ 1 հունվարի 1934 թ. առկա յեղած անասնակերի և դրսից ձեռք բերվելիքի չափը (յեթե կոլխոզում պակասում է)։

2-րդ ժամանակաշրջանի համար պահանջվող կերերի ամբողջ քանակությունը պիտի ծածկվի կոլխոզի միջոցներով՝ 1934 թ. բերքից, վորպիսին պիտի կոլխոզի կողմից հաշվի առնվի, յերբ կազմվում է այդ թվի կերաբույսերի (սիլոս, խոտ, արմատապտուղներ և այլն) և խոտհարքների պլան։

1-ին սյունակի սկզբում մատնանշված է անասունների տեսակները և խմբերը, իսկ վերջում կերի հայթայթման աղբյուրները։

Այդ տախտակի 2 և 10 սյունակներում նշանակվում է անասունների քանակությունն ըստ ժամանակամիջոցների, իսկ 3-րդ և 11-րդ սյունակներում՝ նրանց կերակրման տևողությունը որերով։ Մնացած սյունակներում տրվում է կերերի պահանջը ըստ տեսակների և ժամանակաշրջանի։

Կերի պահանջը պետք է կազմել կոլխոզներում մշակված կերի նորմաների հիման վրա։ Յեթե այդպիսին չի կազմված, պետք է կազմել արտադրական պլանը կազմելու ընթացքում։ Կերակրման նորմաներն անասունների յուրաքանչյուր խմբի համար գրել առանձին թերթիկի վրա և կցել արտադրական պլանի այս հատվածին։

Ցերեսի ներքևի մասում տրված հարցերի մի մասը վերաբերում է միայն մեկ ժամանակաշրջանի (միայն առաջին, կամ միայն 2-րդ ժամանակաշրջանին)։ Այդպիսի հարցերի լրացումը հեշտացնելու համար գծիկով ջնջված են համապատասխան այուանակների այն վանդակները, որոնց չի վերաբերում տվյալ հարցը։

XIII ՀԱՏՎԱԾ

ՈՃԱՆԴԱԿ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ՅԵՎ ՏՆԱՅՆԱԳՈՐԾԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1-ին այուանակում թվարկվում են ոճանդակ արդյունաբերական ձեռնարկները և լրացուցիչ աղբյուրները (ջրաղաց, արհեստանոց, փոխադրական միջոցներ և այլն)։

2-րդ այուանակում ցույց է տրվում վերամշակվող նյութերը, ըստ որում պետք է առանձին ցույց տալ կոլխոզի հումույթը և ուրիշներից ստացվելիքը։ Մնացած այուանակները լրիվ կերպով լրացնել ըստ համապատասխան հարցերի։

XIV ՀԱՏՎԱԾ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԼԱՆԸ

Շինարարության պլանների կազմելու ժամանակ առաջին հերթին նկատի ունենալ 1933 թ. նրանից է առաջ սկսած շինարարությունների ավարտումը, որից հետո միայն նախատեսել նոր շինարարություն։ Նկատի ունենալ բոլոր շինանյութերի հայթայթումն առաջին հերթին սեփական միջոցներով և տեղական նյութերով։

Կոլխոզը շինարարության այնպիսի պլան պիտի ընդունի, որի արժեքը չգերազանցի անբաժանելի դրամագլխի հատկացվելիք գումարին և ծախսվելիք աշխատանքը՝ ընդհանուր աշխատանքի 15%-ից չանցնի։ Վորոշ շեղումներ այս դրույթից կթույլատրվի միայն Հողժողկոմատի համաձայնությամբ։

Այս բաժնում կարելի է նախատեսել նայելով կուլտ-կենցաղային սպասարկման ունեցած շենքերի վերանորոգում, հարմարեցում կամ նոր շենքերի կառուցում (բաղնիք, մսուր, ակումբ)։

XV ՀԱՏՎԱԾ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՇԻՆԱՆՅՈՒԹԵՐՈՎ

Ինչպես 14-րդ հատվածում ասված է, բոլոր հաշիվները կազմել, յելնելով տեղական նյութերն առավելագույն չափով ոգտագործելու տեսակետից։

XVI ՀԱՏՎԱԾ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՅԵՎ ԳՅՈՒՂԳՈՐԾԻՔՆԵՐԻ ՊԱՀԱՆՋԸ ՅԵՎ ՆՈՐՈԳՈՒՄԸ

Տախտակի առաջին (վերին) մասում գետեղել տակա յեղած մեքենաների և գ. գ. քանակը, նրանց վերանորոգումը, նորը պատրաստելը, և նորերի գնումը, իսկ յերկրորդ կեսում (վերջում՝ ստորին մասում) վերանորոգման համար պահանջվող նյութերի և պահեստի մասերի այն քանակը, որը պիտի գնվի կամ ձեռք բերվի։

XVII ՀԱՏՎԱԾ

ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԲՈԼՈՐ ՅԱՆՔԵՐԻ, ԲԱԶՄԱՄՅԱ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ ՅԵՎ ԽՈՏՀԱՐԲՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄՆ ԸՍՏ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ

1-ին այուանակում թվարկում են կոլխոզի կողմից ընդունված ցանքի և տունկերի պլաններն ըստ կուլտուրաների, ցույց տալով զարնան ցանքը և տնկումն առանձին, աշնանն առանձին, ինչպես և գոյություն ունեցող բազմամյա ցանքերը և խոտհարքները։ Այստեղ պետք է նշել նայելով ցելերի բաշխումը։ Մնացած այուանակներում գրվում և բոլոր տարածությունների բաշխումն ըստ բրիգադների։ Այս յերեսում կարելի յե լրացնել 7 բրիգադի համար։ 7-ից ավելի դաշտավարական (բուսաբուծական) բրիգադ ունեցող կոլխոզներում այդ տախտակների վերևից պիտի թուղթ կպցնել և նրա վրա շարունակել գրել բրիգադ № 8, բրիգադ № 9 և այլն։

XVIII ՀԱՏՎԱԾ

ԱՇԽԱՏԱՎՈՐՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ ՅԵՎ ՓԱՇՈՂ ՈՒԺԻ, ԻՆՎԵՆՏԱՐԻ ՈՒ ԿԵՐԻ ԿՅՈՒՄՆ ԸՍՏ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ

Այս հատվածը լրացվում է բրիգադների առաջադրանքների կազմելուց հետո և փաստորեն հանդիսանում է հանրագումարային տախտակ կոլխոզնիկների, քաշող ուժի և գյուղ. ինվենտարի բաշխման ու դասավորման։

Բրիգադների կազմակերպումը հանդիսանում է կենտրոնական խնդիր, ուստի մինչև նրա ձեռնարկելը և տվյալ հատվածի լրացնելը, հետևողական կերպով պիտի ի հայտ բերել բոլոր աշխատանքները և նրանց ծավալի հիման վրա (արտադրական առաջադրանքներից յելնելով) կատարել տարածությունների և արտադրական միջոցների ամրացումը բրիգադներին, և բրիգադի մշտական անձնակազմի հաստատումը. պետք է այդ խնդիրները

բազմակողմանիորեն քննարկվեն արտադրական խորհրդակցություններում, վորից հետո միայն տախտակը վերջնականապես լրացվի։

Այն կոլխոզներում, վորտեղ արդեն բրիգադները կազմված են, ստուգում է կատարվում և սխալներ լինելու դեպքում կատարվում են ուղղումներ, համաձայն արտադրական առաջադրանքների։

Բրիգադների կազմակերպելու ժամանակ ՄՏԿայանների գործունեության շրջաններում անպայման պետք է հաշվի առնել տրակտորային աշխատանքները։

Այս տախտակի առաջին սյունակում թվարկված են 1. Դաշտավարական, 2. Անասնապահական բրիգադները։ 3-րդ մասում տեղ է թողնված շինարարական և այլ օժանդակ բրիգադների համար։ Յեթե կոլխոզն ունի նման բրիգադներ, լրացվում է այդ տողի վրա։

2-րդ, 3-րդ և 4-րդ սյունակների մեջ գրվում է բրիգադներին մշտական կցված անդամների թիվը, իսկ նրանց մանրամասն և անվանական ցուցակը գրվում է բրիգադների առաջադրանքներում։

XIX ՀԱՏՎԱԾ

ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱՅԻ ՊԼԱՆՆԵՐԸ

Այս հատվածը լրացվում է համաձայն ստացած առաջադրանքների և պայմանագրերի։ Այն պրոդուկտները, վորոնց մասին առաջադրանքներ դեռ չեն ստացվել, լրացվում են պետության մթերք հանձնելու մասին հրատարակված վորոշումների հիման վրա, և ծանոթության 7-րդ սյունակում տրվում է դիտողություն այդ մասին։

XX ՀԱՏՎԱԾ

ԴԱՇՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՅԵՎ ԱՅԼ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԵԼԻՔ ՄԹԵՐՔՆԵՐԸ, ԿՈՆՏՐԱԿՏԱՑԻԱՅԻ ԴԻՄԱՑ ՍՏԱՑՎՈՂ ՀԱՑԱՀԱՏԻԿԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԲԱՇԽՈՒՄԸ

1-ին սյունակում նշանակվում են այն բոլոր կուլտուրաները և տունկերը, վորոնցից սպասվում է բերք 1934 թ. ընթացքում, այստեղ մտնում են նայև խոտհարքները և այլն, վորոնք վերցվելու յեն կապալով (պետ. ֆոնդերից)։

3-րդ սյունակում նշանակվում է կոնտրոլ առաջա-

դրանքների հիման վրա կոլխոզի ընդունած պարտավորության չափը, հաշվի առնելով տարվա ընթացքում կատարվելիք ագրոտեխնիկական միջոցառումները։

5-րդ սյունակի տվյալները լրացվում են XIX աղյուսակի 2-րդ սյունակից։

7-րդ սյունակում նախատեսվում է վերադարձում պետական սերմ. և կերի վարկերից, ինչպես և հասարակական կազմակերպություններից (գյուղսերմֆոնդ և այլն), յեթե այդպիսիները վերցվել են։

9-րդ սյունակում վորոշում է սերմֆոնդերի չափը, վորը լրացվելու յե 1934 թ. աշնանացանի և 1935 գարնանացանի համար, համաձայն 4-րդ աղյուսակում մատնանշված գալիք աշնանացանի տարածության, և 1935 թվի գարնան համար նախատեսվելիք ցանքերի մեկ հեկտարի վրա ցանվելիք սերմացվի նորմաներն ընդունել նույնը։

10-րդ սյունակում գրել սերմֆոնդը, յելնելով սերմ ֆոնդերի 15%-ի հաշվից։

11-րդ սյունակի «Կերի ֆոնդ»-ը պիտի վերցվի 12-րդ աղյուսակից, նրա 12—17 սյունակներից «ընդամենը պահանջվում է հանրայնացված անասունների համար» և ճիշտ կերպով պիտի համապատասխանի այդ պահանջին։

12-րդ և 13-րդ առանց վերնագրի սյունակները թողնվում են այլ կամավոր ֆոնդերի համար, վորոնք կարող են առանձնացվել կոլտնտեսության ընդհանուր ժողովի վորոշմամբ՝ խիստ ղեկավարվելով Միութենական Ժողկոմխորհի և Կենտկոմի 1933 թ. օգոստոսի 13-ի վորոշումներով (վորի քաղվածքը, վորպես ծանոթություն, բերվում է աղյուսակի վերջում։

14-րդ սյունակը ցույց է տալիս մթերքների այն մասը, վորը մնում է բաշխելու ըստ աշխօրերի։

15-րդ սյունակում նշանակվում է հացահատիկի այն քանակը, վոր սպասվում է ստանալու կոնտրակտացիայից համաձայն պայմանագրերի։

16-րդ սյունակը 14-րդ և 15-րդ սյունակներում տրված թվերի գումարն է։

17-րդ սյունակը լրացվում է XXVII հատվածը կազմելուց հետո, յերբ հայտնի յե դառնում 1934 թվի ընթացքում կոլտնտեսությունում գործադրվելիք աշխօրերի ընդհանուր թիվը (27-րդ հատվածի 9-րդ սյունակը)։

XX հատվածը կազմելիս պետք է ի նկատի առնել հետևյալը.

Միևնույն կուլտուրայից տարբեր արտադրանքներ ստանալու դեպքում գրել առանձին տողերում, այսպես.

1. Աշնանացան ցորեն.

ա) Հատիկ.

բ) Դարման.

կամ 2. Վիկի ցանք.

ա) Սերմացու.

բ) Խոտ և այլն։

XXI ՀԱՏՎԱԾ

ԱՆԱՄՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆԻՑ ՍՏԱՑՎԵԼԻՔ ՄԹԵՐՔՆԵՐԸ ՅԵՎ ՆՐԱՆՑ ԲԱՇԽՈՒՄԸ

1-ին սյունակում թվարկել անասնապահական այն բոլոր մթերքները, վորոնք ստացվելու յեն տվյալ կոլխոզում։ Մթերքների արժեքների սյունակները (5 և 7) նշանակվում են պետական կայուն գներով։

8-րդ սյունակը լրացվում է միայն անքաշ կաթի նկատմամբ, վորտեղ այդպիսի պահանջ կա։

9-րդ և 10-րդ սյունակները թողնված են նատուրալ կամավոր հատկացումների համար, համաձայն ընդհանուր ժողովի վորոշման (Ժողկոմիսորհի և Կենտկոմի 1933 թ. ոգոստոսի 13-ի վորոշման հիման վրա)։

11-րդ սյունակում գրվում են ըստ աշխորհի բաշխելու համար մնացած մթերքները։

12-րդ սյունակը լրացվում է XX հատվածի 17-րդ սյունակի ձևով։

XXII ՀԱՏՎԱԾ

ՈՉԱՆԴԱԿ ՁԵՌՆԱՐԿՆԵՐԻՑ ՍՏԱՑՎԵԼԻՔ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԱՐՏԱԴՐԱՆՔԸ ՅԵՎ ՆՐԱ ԲԱՇԽՈՒՄԸ

Առաջին սյունակում գրվում են վերամշակումից հետո ստացվելիք մթերքների անունները։

Մինչև 8-րդ սյունակը լրացվում են ըստ հարցատախտակի հարցերի։

9-րդ սյունակում ցույց են տրվում գրամական յեկամուտները (որինակ փոխադրությունից, իջևաններից և այլն)։

10-րդ սյունակում ցույց է տրվում 4 և 9 սյունակների գրամական ցուցանիշների գումարը։

XXIII ՀԱՏՎԱԾ

ԿԱԴՐԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՅԵՎ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՊԼԱՆԸ

Այս տախտակի առաջին սյունակում և նրա հաջորդ հարցերում մեկ տողով նշվում է պատրաստման, իսկ մյուս տողով՝ վերապատրաստման յենթակա (կամ նախատեսվող) կոլխոզնիկների թիվը, բրիգադիր, հաշվետար, տրակտորիստ, անասնապահ, ժամանակ ձեռնարկների վորակյալ աշխատողներ և այլն (հյուսն, դարբին և այլն)։

9-րդ սյունակում ցույց է տրվում նրանց համար նախատեսվելիք աշխորները, Անդրհողժողկոմատի կոլլեգիայի 1933 թ. նոյեմբերի 22-ի վորոշման համաձայն, վորտեղ ասված է, վոր կոլտնտեսական մասսայական կադրերի վորակավորման դպրոցներում ու դասընթացներում սովորող կոլխոզնիկներին, նրանց ուսման ամբողջ ժամանակաշրջանում, յուրաքանչյուր ուսումնական որվա համար տրվում է $^1/_2$-ից մինչև $^3/_4$ աշխոր, նայած նրանց հառաջադիմությանը՝ դպրոցի կամ դասընթացների վարիչների ներկայացրած գնահատականների համաձայն։

10-րդ սյունակում գրվում է նրանց համար հատկացող գումարը։

XXIV ՀԱՏՎԱԾ

ԿՈՒԼՏ-ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ՊԼԱՆԸ

Այս հատվածում նախատեսել կուլտուր-կենցաղային այն հիմնարկների կազմակերպումը, վորպիսին բղխում է տվյալ կոլխոզի պահանջներից և հնարավորություններից (թե սեզոնային և թե մշտական)։

Միջոցների հայթայթումն, ինչպես կատարվելու յե կոլխոզի միջոցներից, նույնպես և կարող է կատարվել պետական ու հասարակական կազմակերպությունների կողմից։

17-րդ սյունակում մատնանշել կոլխոզի կողմից ներդրվող միջոցները։

XXV ՀԱՏՎԱԾ

ՍԱՀՄԱՆՎՈՒՄ Է ՎԱՐՁԱԿԱՆ, ՂԵԿԱՎԱՐ ՅԵՎ ՍՊԱՍԱՐԿՈՂ ԿԱԶՄԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՀԱՍՏԻՔԸ

Այս հատվածը լրացվում է կոլխոզի կողմից ընդունված և Հողբաժնի ու ՄՏԿ-ի կողմից հաստատված հաստիքների հիման վրա, 1933 թ. սեպտեմբերի 7-ի վորոշման համաձան, վորտեղ ասված

ված է՝ «Սահմանել որպես կանոն, որ վարչական—ղեկավար և սպասարկող կազմին՝ (կոլտնտեսության նախագահները, վարչության անդամները, ճյուղի վարիչները, ձեռնարկությունների վարիչները, հաշվային-գրասենյակային աշխատողները, հաշվետարները, տնտեսավարները, պահեստապետները, կոլտնտեսության գրասենյակի սպասարկողները, պահապանները, մանկական հիմնարկների և հասարակական սննդի աշխատողները) տրվող աշխորերի թիվը, ինչպես այդ ապացուցված է լավ կազմակերպված կոլտնտեսություններում, չպետք է գերազանցի, նայած տնտեսության մեծությանը և բարդությանը, կոլխոզում գոյացած աշխորերի ընդհանուր գումարի 8%-ից»:

XXVI ՀԱՏՎԱԾ

ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՐՎԵԼԻՔ ԱՇԽՈՐԵՐԻ ԹԻՎԸ ԸՍՏ ԲՐԻԳԱԴՆԵՐԻ ՅԵՎ ՖԵՐՄԱՆԵՐԻ

Այս տախտակի տվյալները լրացվում են բրիգադների և ֆերմաների առաջադրանքների տախտակներից, վերջինները կազմելուց հետո:

XXVII ՀԱՏՎԱԾ

ԱՄԲՈՂՋ ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ 1934 Թ. ԸՆԹԱՑՔՈՒՄ ՏՐՎԵԼԻՔ ԱՇԽՈՐԵՐԻ ԹԻՎԸ

Այս տախտակը հանդիսանում է ամփոփումը մի շարք այլ տախտակների և ցույց է տալիս 1934 թ. ընթացքում կոլխոզնիկներին հասանելիք աշխորերի ընդհանուր գումարը:

1 և 2 սյունակներում գրվում են XXVI աղյուսակի գումարները դաշտավարական բրիգադների և անասնապահական բրիգադների ու ֆերմաների 3-րդ սյունակում փոխանցվում է IV հատվածի 6 սյունակի գումարը (ՄՏԿ կողմից սպասարկվող կոլխոզներում):

4-րդ սյունակը՝ VIII հատվածի 9 սյունակից.
5-րդ » XIV » 13 »
6-րդ » 1—5 սյունակների գումարն է.
7-րդ » XXV հատվածի 4-րդ սյունակի թվերի գումարն է.
8-րդ » XXIII հատվածի 9-րդ սյունակի յերկրային զորամասեր գնացող կարմիր բանակայիններին հասանելիք աշխորերի գումարը:

9-րդ սյունակը ներկայացնում է բոլոր սյունակների (1-8) գումարը:

XXVIII ՀԱՏՎԱԾ

ԲԱՆՎՈՐԱԿԱՆ ՅԵՎ ՔԱՇՈՂ ՈՒԺԻ ՈԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԼԱՆՆ ԸՍՏ ՍԵԶՈՆՆԵՐԻ

Թե բանվորական ձեռքերի և թե քաշող ուժի պահանջի հաշվառումը կատարվում է գյուղատնտեսական չորս սեզոնների համար, հիմք ընդունելով ամենալարված (բանվորական ձեռքերի և քաշող ուժի պահանջի տեսակետից) սեզոնի պահանջը:

XXIX ՀԱՏՎԱԾ

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ 1934 Թ. ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՊԼԱՆԸ

Կոլխոզն իր տնտեսության ֆինանսական ճյուղի կանոնավոր կազմակերպման նպատակով, արտադրական պլանը կազմելիս, պետք է կազմի նաև ֆինանսական տարեկան պլանը:

Ֆինպլանում պետք է արտահայտվեն 1934 թվի ընթացքում սպասվելիք դրամական մուտքերը և յելքերը բոլոր հոդվածներով: Ֆինպլանը կազմվում է արտադրական պլանի հիման վրա:

Ֆինանսական պլանը կառուցված է այնպես, որ յուրաքանչյուր գումար, ինչպես մուտքի մասում, նույնպես և յելքի մասում, նայած գումարի բնույթին, նշանակվում է յերկու սյունակներից մեկն ու մեկում:

3 և 7 սյունակում՝ «կոլխոզի ընդհանուր հաշվով»:
4 և 8 » «անբաժանելի գումարի հաշվով»:

3-րդ սյունակում նշանակվում են կոլտնտեսության բոլոր դրամական յեկամուտները մթերքների ռեալիզացիայից, օժանդակ ձեռնարկներից, փոխադրությունից և այլն, որոնք յենթակա յեն բաշխման:

7 սյունակում գրվում են կոլխոզի բոլոր ծախքերը և ֆոնդային հատկացումները, որոնք կատարվում են կոլխոզի ընդհանուր յեկամուտներից:

3 և 7-րդ սյունակները պետք է հաշվեկշիռ կազմեն (балансироваться):

4-րդ սյունակում գրվում են կոլտնտեսության այն մուտքերը, որոնք բաժանման և բաշխման յենթակա չեն: Այստեղ է գրվում անբաժանելի այն ֆոնդը, որը նախատեսված է առանձնացնել 1934 թվի համար, հետևյալ աղբյուրներից. ա) նատուրալ ֆոնդերի առանձնացումից, որոնք առանձնացվում են

անբաժանելի ֆոնդի լայնացման համար, բ) մինչ այս տարի չստացված ապահովագրական վճարումները, գ) անպետք գույքի վաճառքից, դ) փայավճարներից հատկացումներ և այլ գումարներ, որոնք պետք է անբաժանելի ֆոնդի մեջ անցկացվեն։ Այստեղ պիտի նախատեսել նայելով արտադրական վարկերը, որպիսիք մտնում են հողբաժնի կողմից նախատեսված լիմիտի մեջ։

8-րդ սյունակը նախատեսում է տնտեսության մեջ կատարվելիք կապիտալ շինարարության ծախքերը (շինարարության ֆերմայի համար կապիտալ գնումներ, արտադրական վարկերի մարում, գյուղգործիքների գնում, բանող և արտադրող անասունների գնում և այլն)։

Այս սյունակի գումարը ցույց է տալիս, թե կոլտնտեսությունը որքան կապիտալ ներդրումներ է կատարելու 1934 թ.։

Ֆինպլանը կազմելու աշխատանքն հեշտացնելու նպատակով թե մուտքի և թե ելքի սյունակներում գծիկներով չընջված են այն տեղերը, որտեղ նշումներ չպետք է կատարվեն, իսկ մյուս բաց տեղերում կատարվելու են համապատասխան գրանցումները։

Ֆինպլանի գրանցումների կարգը, ըստ առանձին տողերի և սյունակների հետևյալն է.

Ա. ՖԻՆՊԼԱՆԻ ՄՈՒՏՔԻ ՄԱՍԸ

I ՀԱՏՎԱԾ

ԿԱՆԽԻԿ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՄՆԱՑՈՐԴԸ ԱՌ 1 ՀՈՒՆՎԱՐԻ 1934 Թ.

1-ին կետ. «բանկի և խնայդրամարկղի հաշիվներով» գրվում է 3-րդ սյունակում, իսկ կապիտալ շինարարության գումարների մնացորդը՝ 4-րդ սյունակում։

2-րդ կետում «կոլտնտեսության դրամարկղում» ընդհանուր հաշվի մնացորդը գրվում է 3 սյունակում, իսկ կապիտալ ներդրումների գումարի մնացորդը՝ 4-րդ սյունակում։

II ՀԱՏՎԱԾ

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԹԵՐՔՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԻՑ

1-ին կետ. «1933 թվից մնացած մթերքների վաճառքից» արտադրանքի այն մասը, որը ռեալիզացիայի է յենթարկվելու 1934 թվին՝ գրանցվելու է 3 սյունակում, մթերքների այն մասը, որը հանձնվելու է պետությանը՝ հաշվել պետական գներով, իսկ մյուս մասը (մնացորդը) կոլխոզ շուկայի միջին գներով։

2-րդ կետ.—«պետական պարտավորությունների կարգով հանձնվող (վաճառվող) մթերքներից» գրանցվում է 3-րդ սյունակում առանձին-առանձին ըստ ճյուղերի՝ հացահատիկ—կուլտուրաների, տեխնիկական կուլտուրաների և այլն՝ համաձայն XX-րդ հատվածի աղյուսակի 6-րդ սյունակի տվյալների։ Անասնապահական մթերքների հանձնումից ստացվելիք գումարները նույնպես գրվում են 3-րդ սյունակում ըստ առանձին ֆերմաների կամ համայնացված հոտի, համաձայն XXI աղյուսակի 5-րդ և 6-րդ սյունակի։

3-րդ կետ.—«պայմանագրի համաձայն և կոլտնտառևարի կարգով վաճառվող մթերքներից» գրանցվում են այն գումարները, որոնք գոյանալու են, ինչպես կոլխոզնիկների մթերքների վաճառքը կազմակերպելուց գոյացած հատկացումներից, նույնպես և կոլխոզի մթերքների վաճառքից ստացված գումարները։ Կոլխոզառևարի միջոցով իրացվելիք մթերքների արժեքը հաշվվում է շուկայի գներով։

III ՀԱՏՎԱԾ

ԴՐԱՄԱԿԱՆ ՄՈՒՏՔԵՐ ՈՃԱՆԴԱԿ ՅԵՎ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐԻՑ

Լրացվում է 3-րդ սյունակում, համաձայն XXII բաժնի 10 սյունակի տվյալների, ըստ որում խոշոր յեկամուտները ցույց պիտի տրվեն առանձին կետերով, իսկ մանր գումարները՝ մեկ ընդհանուր տողով։

IV ՀԱՏՎԱԾ

ԱՅԼ ԴՐԱՄԱԿԱՆ ՄՈՒՏՔԵՐ

Այս հատվածի տակ մուտքերը գրվում են 3-րդ սյունակում։

1-ին կետ.—«ընթացիկ հաշիվներից և ավանդներից ստացվելիք տոկոսներ» գրանցվում է բանկի կամ խնայդրամարկղի %-ային դրույքներից 1934 թվի 1 հունվարի տվյալներով, և յենթադրական հավելումներ 1934 թվի հաշվին։ Սրա համար պիտի վերցնել տարվա ընթացքում միջին մնացորդի տվյալները Գեռբանկում կամ խնայդրամարկղում։

2-րդ կետ.—«ուտիլ հումույթի հանձնում»-ից գրանցվում է ունեցած և ունենալիք ուտիլ-սիրոյի, անպետք նյութերի, անպետք գույքի և այլնի վաճառքից գոյացած յեկամուտը։

3-րդ կետ.—«պարտքերի գանձում» գրանցվում է կոլխոզին հասանելիք այն բոլոր պարտքերը (հիմնարկներից և անձերից), որոնք պետք է ստացվեն 1934 թ. ընթացքում։

V ՀԱՏՎԱԾ

ՉԱՆԱՉԱՆ ՄՈՒՏՔԵՐ

1-ին կետ.—«անպետք գույքի վաճառքից». այստեղ գրվում է ինչպես ընդհանրապես անպետք գույքի վաճառքը, նույնպես և այն գույքի վաճառքը, որպիսին չնայած ընդհանրապես պիտանի չէ, սակայն կոլխոզի համար անգործադրելի, և որպիսին նախատեսված է ռեալիզացիայի յենթարկել։ Գույքի արժեքի գումարը գրանցվում է 4 սյունակում («անբաժան գումարների հաշվին»), որովհետև այդպիսին ձեռք է բերվում անբաժան դրամագլխի հաշվին և նրա վաճառքից ստացված գումարը նույնպես պետք է գնա անբաժան ֆոնդը լրացնելու։

2-րդ կետ.—«անցած տարիներից մնացած չստացված ապահովագրական վճարները» ստանալու յենթակա գումարները (սատկած անասունների և այլն) նույնպես գրանցվում են 4-րդ սյունակում։

3-րդ և 4-րդ կետերում լրացվում են մնացած մուտքերը և ըստ բնույթի գրանցվում են 3 կամ 4 սյունակում։

5-րդ կետ.—4 սյունակում գրանցվում է սպասվելիք մուտքերը «1933 թ. անբաժան դրամագլխին» հատկացված մթերային ֆոնդի իրացումից, յեթե 1933 թվին որոշվել է, սակայն չի իրացվել։

VI ՀԱՏՎԱԾ

ՍՏԱՑՎԵԼՈՒ ՅԵ ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻՑ

1-ին կետ.—Նպատակային (վերադարձման յենթակա) ավանդները կոլտնտեսականներից գրանցվում են 3 սյունակում, յեթե կոլխոզի ընդհանուր ժողովը որոշում ունի այդպիսին կազմակերպելու մասին։

2 և 3 կետ.—լրացվում են հնարավոր մուծումներ կոլխոզնիկներից ինչպես մուտքի վճարների մնացորդներ, որոնց գումարները գրանցվում են 4 սյունակում։

VII ՀԱՏՎԱԾ

ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐ

1-ին կետ.—«յերկարատև արտադրական վարկեր» գրանցվում են 4 սյունակում։

2-րդ կետ.—«կարճատև արտադրական վարկեր» գրանցվում է 4 սյունակում։

3-րդ կետ.—«կոնտրակտացիայի դիմաց ստացվելիք ավանդներ» գրանցվում են 4 սյունակում։

VIII ՀԱՏՎԱԾ

«Անբաժանելի ֆոնդին հատկացվելու յե 1934 թ. յեկամուտներից» այս հատվածումն է գրանցվում 1934 թվի յեկամտից առանձնացվելիք անբաժանելի ֆոնդը (4 սյունակում)։ Անբաժանելի դրամագլխի հատկացվելիք գումարի հաշվարկը կազմվում է այսպես.—կոլխոզի ընդհանուր յեկամտից (մթերք և դրամ) դուրս գալ պարտադիր վճարումները (գյուղհարկ, ապահովագրական տոկոսներ և այլն), 1934 թ. վերադարձման յենթակա բոլոր վարկերն և պարտքերը, սերմֆոնդը, անասնակերի ֆոնդը, մնացածից առանձնացնել անբաժանելի ֆոնդի 10%—15% (նայած կոլխոզի տնտեսական ունակությանը)։

Վերջումը տվում է 3 և 4 սյունակների ընդհանուր գումարը։

Բ. ՖԻՆՊԼԱՆԻ ՅԵԼՔԻ ՄԱՍԸ

I ՀԱՏՎԱԾ

ՊԱՐՏԱԴԻՐ ՎՃԱՐՈՒՄՆԵՐ

Գրանցվում է 3-րդ սյունակում, հաշվարկը կատարվում է համաձայն ժողկոմխորհի 1933 թվի համապատասխան որոշումների (գյուղմիասհարկի և ջրային տուրքի մասին)։

II ՀԱՏՎԱԾ

ՓՈԽԱՌՈՒ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՎԵՐԱԴԱՐՁՈՒՄԸ

1-ին կետ.—յերկարատև վարկեր և նրանց տոկոսները գրանցվում են 3 սյունակում։

2-րդ կետ. կարճատև վարկեր և նրանց տոկոսները գրանցվում են 3 սյունակում։

3-րդ կետ. կոնտրակտացիայի հաշիվներ՝ 3 սյունակում։

4-րդ կետ. կոնտրակտացիայի նպատակային ավանդների վերադարձումը կոլխոզնիկներին՝ 3 սյունակում։

Այս հատվածի բոլոր հոդվածները (կետերը) գնում են «կոլտնտեսության ընդհանուր հաշվով»՝ 3-րդ սյունակով։

III ՀԱՏՎԱԾ

ԿԱՊԻՏԱԼ ԾԱԽՔԵՐԸ

Այս հատվածով ծախսվող դրամական բոլոր գումարները կատարվում են անբաժան դրամագլխի հաշվին և գրվում են 4 սյունակում։

IV ՀԱՏՎԱԾ

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԾԱԽՔԵՐ

Արտադրական բոլոր ծախքերը գրվում են «կոլխոզի ընդհանուր հաշվին» (3 սյունակ)։

V ՀԱՏՎԱԾ

ՎԱՐՉԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԾԱԽՔԵՐ

Գրանցվում են 3-րդ սյունակում, համաձայն տվյալների։

VI ՀԱՏՎԱԾ

ԿՈԼՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ ՀԱՏՈՒԿ ՎՈՐՈՇՈՒՄՈՎ ՍԱՀՄԱՆՎՈՂ ԾԱԽՔԵՐ

Գրվում են 7 սյունակում, XXIII աղյուսակի 10-րդ սյունակի տվյալների համաձայն։

2-րդ կետ. «մանկամսուրների համար» և այլ կուլտ-կենցաղային միջոցառումների ծախքերը գրանցվում են 3 սյունակում, համաձայն XXIV աղյուսակի 17-րդ սյունակի։

3-րդ, 4-րդ և 5-րդ կետերում գրանցվում են այն ծախքերը, որոնք նախատեսված են նույնպես հատուկ որոշմամբ։

VII ՀԱՏՎԱԾ

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ 1933 Թ. ԱՇԽՈՐԵՐԻ ՀԱՇԻՎՆԵՐԸ ՓԱԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Գրանցվում է 3 սյունակում կոլխոզնիկների հասանելիք պարտքը վճարելու համար։

VIII ՀԱՏՎԱԾ

ՀԱՏԿԱՑՎԵԼՈՒ ՅԵ ԱՆԲԱԺԱՆ ՖՈՆԴԻՆ 1934 Թ.

Ծախքի մասում այդ գումարը գրանցվում է «կոլխոզի ընդհանուր հաշվով» 3 սյունակում։

VIII հատվածի լրացնելուց հետո տրվում է յերկու սյունակների գումարը 7 և 8 (առանձին-առանձին), որից հետո, յելքի մասում «բաշխվելու յե ըստ 1934 թ. աշխորերի» տողի դիմաց գրվում է դրամական այն գումարը, որպիսին յենթակա յե բաշխման

ըստ աշխորերի, այդ թիվը ստացվում է այսպես—մուտքի մասի 3-րդ սյունակի ընդհանուր գումարից դուրս գալ յելքի մասի 3-րդ սյունակի ընդհանուր գումարը։ Յելքի մասից պիտի դուրս գալ հետագա տարիներին փոխանցվելիք գումարների հնարավոր մնացորդը (կոլխոզնիկների և կոնտրակտացիների ավանսները, նպատակային և վերադարձման յենթակա վարկերը, որպես պետ. հիմնարկներին և կոլխոզնիկներին վարձատրելու յենթակա գումարներ և այլն)։

Այնուհետև «բաշխվելու յե ըստ 1934 թ. աշխորերի» ընդհանուր գումարը բաժանելով տարվա ընթանցքում գոյանալիք աշխորերի վրա (XXVII աղյուսակի 9-րդ սյունակ), վորոշվում է մեկ աշխորին հասանելիք դրամական յեկամուտը, վորպիսին լինչպես և «բաշխվելու յե ըստ 1934 թ. աշխորերի» գումարները գրվում են 3-րդ սյունակներում։ Բաշխման յենթակա ընդհանուր յեկամուտի չափը գրելով իր տեղում, դուրս է բերվում դրամական բոլոր ծախքերի գումարը (3-րդ սյունակի գումարը)։

«Դրամական գումարների մնացորդն առ 1 հունվարի 1935 թ.» գրանցվում է յերկու հաշիվներով էլ (3 և 4 սյունակով)։

3 սյունակում գրանցվում է փոխանցվելիք գումարների հնարավոր մնացորդը (վերադարձման յենթակա նպատակային մուծումները և չծածկված կոնտրակտացիոն ավանսները), յեթե այդպիսիք կան, իսկ 4 սյունակում կապիտալ ներդրումների մնացորդը։

ԲՐԻԳԱԴԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԵԼՈՒ ԿԱՐԳԸ

ԴԱՇՏԱՎԱՐԱԿԱՆ ԲՐԻԳԱԴԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ

I ՀԱՏՎԱԾ

ԲՐԻԳԱԴԻ ԿԱԶՄԸ

Այս տախտակը կազմվում է բրիգադի առաջադրանքի մյուս բոլոր մասերը կազմելուց հետո, յերբ կոմպլեկտավորվում է բրիգադի անձնակազմը։

II ՀԱՏՎԱԾ

ԲՐԻԳԱԴԻՆ ԱՄՐԱՑՎՈՒՄ Է

Գրվում են բրիգադին ամրացված արտադրական հողամասերը, տարածությունները (դաշտային հողամասերը բազմամյա տունկերը, խոտհարքները և այլն)։

III ՀԱՏՎԱԾ

ՑԱՆՔԻ, ՏՆԿՄԱՆ ՅԵՎ ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ

1-ին սյունակում թվարկվում են այն բոլոր ցանքսերը, տնկիները ու այլ կուլտուրաները, որոնք 1934 թվի ընթացքում ցանվելու և կամ տնկվելու են, կամ նախորդ տարիներից գոյություն ունեն և 1934 թվին բերք են տալու։ Կուլտուրաները մատնանշել մանրամասն այսպես որինակ։—ցանքս սերմացուի համար, ցանքս խոտի համար, կամ ցորեն շարքացանքս, ցորեն տեսակավոր («Ուկրայինկա» «Կոպերատորկա» և այլն)։

2-րդ սյունակում մատնանշվում է №-ը կամ անունը այն տարածության, որը դրվում է կամ դրված է տվյալ կուլտուրայի տակ։

7-րդ սյունակում մատնանշել սերմերի այն քանակությունը, կամ տնկիների թիվը (ցենտներ, կիլո, հատ և այլն), որը կոլխոզի կողմից առանձնացված է տվյալ բրիգադայի համար, համաձայն արտադրական առաջադրանքի։

8-րդ սյունակում մատնանշվում է բերքատվությունն ըստ կուլտուրայի, որպես առաջադրանք, համաձայն այն ագրո-ձեռնարկումների, որոնք բրիգադի կողմից կատարվելու են, որպես կոլխոզի առաջադրանք։

9, 10 և 11-րդ սյունակները ցույց են տալիս բերքի ընդհանուր չափն ըստ կուլտուրաների և նրանց արտադրանքի (հատիկ, դարման, սերմ, խոտ, բամբակ և այլն)։

VI ՀԱՏՎԱԾ

ԲՐԻԳԱԴԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԺԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆՆԵՐԻ ՅԵՎ ԱԳՐՈ-ՁԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐՆ ԸՍՏ ԿՈՒԼՏՈՒՐԱՆԵՐԻ

1-ին սյունակում թվարկվում են բոլոր աշխատանքները, բոլոր կուլտուրաների վերաբերյալ ըստ տարբեր ժամանակաշրջանների՝ ա) նախապատրաստական շրջանի համար, բ) դարնան գյուղատնտեսական կամպանիայի ժամանակ, գ) մշակման ժամանակաշրջանի և հացահատիկների բերքահավաքի և դ) տեխնիկական կուլտուրաների բերքահավաքի և աշնանացանի ժամանակաշրջան։

2-րդ սյունակում նշվում են աշխատանքի վորակական ցուցանիշները, վորպիսիք պարտավոր են կատարել բրիգադները, յուրաքանչյուր աշխատանքը և ագրո-ձեռնարկումը կատարելու ժամանակ։

4-րդ սյունակում ցույց են տրվում ՄՏԿ-ի կողմից կատարվելիք աշխատանքները։

5—20-րդ սյունակները լրացվում են միայն կոլխոզի տվյալ բրիգադի կողմից կատարվելիք աշխատանքների համար։

6-րդ սյունակում լրացվում է կոլխոզում մշակված արտադրանքի նորմաների հիման վրա մեկ գործիքի կամ մեկ աշխատող կոլխոզնիկի համար։

7-րդ սյունակում ցույց է տրվում, թե տվյալ աշխատանքը գնահատման վոր խմբին է դասվում։

8-րդ սյունակում լրացվում է նույնպես կոլխոզներում սահմանված արտադրանքի նորմաների և նրանց գնահատման հիման վրա, ըստ վորում աշխատանքի միավորը մի դեպքում կարող է լինել հեկտարը, մյուս դեպքում՝ ցենտները և այլն։

9-րդ սյունակում ցույց է տրվում հասանելիք աշխատանքների ընդհանուր թիվը, վորպիսին ստացվում է 5-րդ և 8-րդ սյունակների բազմապատկումից։

12-րդ սյունակում նշվում են որերի թիվը—յելնելով տվյալ աշխատանքի համար մշակված ժամկետից (10-րդ, 11-րդ սյունակների նշումներից)։

13-րդ սյունակում ամենորյա առաջադրանքը, ստացվում է «բրիգադի աշխատանքի ծավալը» (5-րդ սյունակ) բաժանելով «աշխատանքի տևողությունը որերով»-ի (12-րդ սյունակի) վրա։

14—16-րդ սյունակում ստացվում է «ամենորյա առաջադրանք»-ը (13-րդ սյունակ) բաժանելով արտադրանքի նորմայի վրա, յեթե տվյալ նորման կատարում է մեկ մարդ, կամ յեթե մեքենայի վրա աշխատում է մեկ մարդ։ Յեթե մեքենայի կամ գործիքի վրա աշխատում են մի քանի մարդ, այն դեպքում ամենորյա առաջադրանքի բաժանման քանորդը բազմապատկվում է մարդկանց թվով։ Նայած թե ինչպիսի մարդ է կատարելու այդ աշխատանքը (տղամարդ, կին թե պատանի), գրվում է համապատասխան սյունակում։

17—18-րդ սյունակները նույնպես վորոշվում են ամենորյա առաջադրանքը բաժանելով (13-րդ սյունակ) արտադրան-

քի նորմայի վրա, յեթե կատարողը մեկ կենդանի յե, իսկ յեթե մի քանիսն է, այն դեպքում քանորդը բազմապատկել մեքենայի վրա աշխատող կենդանիների թվով և գրել համապատասխան սյունակում։

19-րդ սյունակում գրել գյուղգործիքի անունը։

20-րդ սյունակն ստացվում է ամենորյա առաջադրանքը բաժանելով արտադրանքի նորմայի վրա։

Ամբողջ աղյուսակը լրացնելուց հետո 9-րդ սյունակի աշխորերի ընդհանուր գումարն է արվում (ամբողջ բրիգադի արտադրական առաջադրանքի կատարման համար)։

V ՀԱՏՎԱԾ

ՄՏԿ-Ի ԿՈՂՄԻՑ ԿԱՏԱՐՎԵԼՈՒ ՅԵ

Այս հատվածը լրացվում է միայն ՄՏԿ-ի կողմից սպասարկվող կոլխոզներում։

1-ին սյունակում գրվում են այն բոլոր աշխատանքները, վորոնք կատարելու յե ՄՏԿ-ն տվյալ բրիգադի հողամասերում, ամբողջ տարվա ընթացքում։

2—6 սյունակները լրացվում են IV հատվածի համապատասխան սյունակների ձևով։

7, 8 և 9-րդ սյունակները լրացվում են համաձայն ՄՏԿ-ի արտադրական պլանների (տրակտորների և նրանց կցվող գործիքների առանձնացման մասին)։

10—14 սյունակները՝ ամենորյա պահանջը բանվորական ձեռքերի և քաշող ուժի, տրակտորային բրիգադի սպասարկման համար։

15—16-րդ սյունակներում ցույց է տրվում աշխորերի այն քանակը, վորը գրանցվում է բրիգադի անդամներին, յելնելով արտադրանքի նորմաներից և նրանց գնահատումից։

17-րդ սյունակում ցույց է տրվում տրակտորիստներին հասանելիք աշխորերի թիվը, յելնելով արտադրանքի նորմաների և նրանց գնահատումից, համաձայն Աշխ. և Պաշտպ. Խորհրդի վորոշման։

Ամբողջ սյունակը լրացնելուց հետո տրվում է 16—17-րդ սյունակների աշխորեր ընդհանուր գումարը։

VI ՀԱՏՎԱԾ

ԲՐԻԳԱԴԻՆ ԿՑՎԱԾ ԲԱՆՈՂ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՅԵՎ ԳՈՒՅՔԻ ՅՈՒՅԱԿԸ

Այս հատվածում տեղավորված են յերկու աղյուսակներ, վորոնցից առաջինը վերաբերում է բանող անասունների առանձնացմանը, իսկ յերկրորդը՝ մեռյալ գույքին։ «Անասունների դրությունը» (առաջին աղյուսակում) մատնանշել լավ, միջակ, միջակից ցածր և այլն)։

Յերկրորդ տախտակում «գույքի դրությունը» նշանակել նոր, վերանորոգված, յերկու աղյուսակների եվ 3-րդ սյունակում անպայման նշանակվում է այն կոլխոզնիկի անուն և ազգանունը, վորին կցվում են անասունները և գույքը։

VII ՀԱՏՎԱԾ

ԲԱՆՈՂ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՒՄ Ե ԿԵՐ

2-րդ սյունակում ցույց է տրվում 1933 թվի բերքից առանձնացված կերի փաստական մնացորդը։

3-րդ սյունակում ցույց է տրվում նույն թվում անասնակերի այն քանակը, վորն առանձնացված է 1934 թ. դարնանացանի համար։

4-րդ սյունակում ցույց տալ անասնակերի այն քանակը, վորն առանձնացվելու յե 1934 թ. բերքից, բրիգադի անասուններին կերակրելու համար մինչև 1935 թվի նոր բերքը, կոլխոզի մշակած կերակրման նորմաների համաձայն։

«Բրիգադի արտադրական առաջադրանքների կատարման արդյունքները» աղյուսակը լրացվում է յուրաքանչյուր աշխատանքի փաստական կատարումից հետո, բրիգադիրի կողմից։

«Դիտողություններին» յերեսը մնում է կոլխոզվարչության կողմից հետագայում դիտողություններ կատարելու, արտադրական առաջադրանքի կատարման առթիվ (կատարված աշխատանքներին զուգահեռ կերպով)։

ԱՆԱՍՆԱՊԱՀԱԿԱՆ ԲՐԻԳԱԴԻ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ

I ՀԱՏՎԱԾ

Կազմվում է բրիգադի ամբողջ արտադրական առաջադրանքը կազմելուց հետո։

II ՀԱՏՎԱԾ

«Բրիգադին հանձնված անասունների քանակը»։

2-րդ սյունակում գրվում է բրիգադին կցված անասունների անունները ըստ տարիքային խմբերի։ Տարիքային խմբերը տալ այն կարգով, ինչպես հրահանգված է արտիֆինպլանի X հատվածի աղյուսակի նկատմամբ։

4-րդ սյուանկում «անասունների դրությունն ըստ գիրության» նշանակվում է այսպես—լավ գիրացված, միջակ գերության և միջակից ցածր գիրացած։

III ՀԱՏՎԱԾ

ԱՃ ՅԵՎ ԱՐՏԱԴՐԱՆՔ ՍՏԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ ԲՐԻԳԱԴԱՅԻՆ ՏԸՐՎՈՂ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ

Սերնդի մասին առաջադրանքը տրվում է, յելնելով հղի անասունների քանակից։

Տախտակը լրացվում է համաձայն առկա յեղած անասունների քանակի և կոլխոզի կողմից ըստ անասունների սահմանված արտադրանքի նորմաների։

IV ՀԱՏՎԱԾ

ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ՅԵՎ ԱՆԱՍՆԱԲՈՒԺԱԿԱՆ ԶԵՌՆԱՐԿՈՒՄՆԵՐ

ա) Բեղմնավորման կամպանիա։

1-ին սյունակում թվարկվում են բոլոր տեսակի մայր անասունները (կով, վոչխար, մերուն, գամբիկ և այլն)։

2-րդ սյունակը կազմվում է բոլոր մայր անասուններին ծածկելու տեսանկյունով։

5—6 սյունակները. զուգավորման ժամկետները սահմանվում են այն հաշվով, վորպեսզի ծննդաբերությունը տեղի ունենա նորածինների աճեցման և պահպանման համար նպաստավոր ժամանակամիջոցներում։

բ) Համաձայն անասունների տեսակի և խնամքի պայմանների՝ մշակվում են անասնաբուժական-անասնաբուծական այլ ձեռնարկումներ, վորպիսիք պարտավոր է կատարել բրիգադը։

V ՀԱՏՎԱԾ

ԲՐԻԳԱԴԻ ՏԱՐԵԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԱՌԱՆՁՆԱՑՎՈՒՄ Է

Այս աղյուսակը նույնպես լրացվում է գաշտավարական բրիգադի առաջադրանքի համապատասխան տախտակի ձևով։

VI ՀԱՏՎԱԾ

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԱՄՐԱՑՈՒՄԸ ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԻՆ

Աղյուսակում ցույց է տրվում կոլխոզնիկների անունն և ազգանունն ու նրանց կցվող անասունների խմբերն ըստ տարիքների։

VII ՀԱՏՎԱԾ

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ԲՐԻԳԱԴԻՆ ՏՐՎԵԼՈՒ ՅԵ ԱՇԽՈՐ

1-ին սյունակում թվարկվում են այն բոլոր աշխատանքները, վորոնք պիտի կատարի բրիգադն ամբողջ տարվա ընթացքում։ Խոշոր և մանր յեղջյուրավոր անասունների բրիգադների համար, վորտեղ արտադրանքի գնահատումը կատարվում է ըստ առանձին ժամանակաշրջանների, այդպիսի աշխատանքները դրվում են առանձին՝ ձմռան (մսուրային շրջանի) և ամռան (արոտային շրջանի) համար։ Խոզաբուծության և այլ ճյուղերի աշխատանքների համար թվարկվում են աշխատող կոլխոզնիկների և արտադրվող մթերքների տեսակները, վորոնց համար տրվում է առաջադրանքներ և գրանցվում են աշխորները։

2-րդ սյունակում գրվում է աշխատանքի տեվողությունը, վորը ժամանակված ձևով՝ տավարի և մանր յեղջերավորների համար յերկու ժամանակաշրջանի նկատմամբ, իսկ մյուս անասուններին ամբողջ տարվան։

3-րդ սյունակում մատնանշվում է ամբողջ գլուխների թիվը, վորն ընդգրկում է տվյալ աշխատանքը։

4-րդ սյունակում արտադրական առաջադրանքը տրվում է ըստ մթերքների տեսակի։

5-րդ սյունակում բեռնվածության նորման տրվում է գլուխներով մեկ աշխատողի համար, յելնելով կոլխոզի կողմից վորոշված նորմաներից։

9-րդ սյունակում հաշվել հետեվյալ կերպ—գլուխների թիվը (3-րդ սյունակ), բաժանել բռնվածության նորմայի վրա (5-րդ սյունակ)։

7-րդ սյունակ. լրացվում է կոլխոզի կողմից ընդունված գնահատումների համաձայն։

8-րդ սյունակը լրացնել սյունակի տվյալները բաժանելով 4-րդ սյունակի թվի վրա։

9-րդ սյունակ. ստացվում է արտադրական առաջադրան-

քը (4-րդ սյունակ) բազմապատկելով արտադրանքի միավորի գնահատման թվով (8-րդ սյունակ)։

Աղյուսակը կազմելուց հետո տալ 9-րդ սյունակի գումարը (աշխատանքի)։

ԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԸ ԿԱԶՄԵԼԸ

1. ԿԱԹՆԱԱՊՐԱՆՔԱՅԻՆ ՖԵՐՄԱՅԻ 1934 Թ. ՏԱՐԵԿԱՆ ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ

Այն ֆերմաներում, վորտեղ գործում է միայն մեկ բրիգադ, ֆերմայի առաջադրանքը միաժամանակ հանդիսանում է ավյալ բրիգադի առաջադրանքը և բրիգադի համար առանձին առաջադրանք չի կազմվում, յեթե ֆերման մի քանի բրիգադ ունի, այդ դեպքում կազմվում է նայեվ յուրաքանչյուր բրիգադի համար առանձին առաջադրանք։

I ՀԱՏՎԱԾ

ՖԵՐՄԱՅԻ ԿՈԼԽՈԶՆԻԿՆԵՐԻ ՑՈՒՑԱԿԸ

II ՀԱՏՎԱԾ

ՖԵՐՄԱՅԻ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ

Թվարկում են ֆերմայի բոլոր անասուններն ըստ աղյուսակներում մատնանշված խմբերի։

III ՀԱՏՎԱԾ

ՍՏԱՑՎԵԼՈՒ ՅԵ ԱՃ

Կազմվում է ունեցած հղի կովերի հիման վրա։

Աղյուսակը կազմվում է հողբաժնից ստացված առաջադրանքի համաձայն և կոլխոզի վորոշմամբ «արտֆինպլանի հիման վրա։»

IV ՀԱՏՎԱԾ

ԿԱՏԱՐԵԼ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԽՈՏԱՆՈՒՄ

Այս հատվածում նախատեսվում է զոոտեխնիկական խոտանումը, հաշվի առնելով պետությանը միս հանձնելու պլանի պարտադիր կատարումը։

V ՀԱՏՎԱԾ

ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ՔԱՆԱԿՆ ԱՌ 1-Ն ՀՈՒՆՎԱՐԻ 1935 Թ.

Սահմանվում է ստացվելիք աճի և նրա բաշխման համաձայն, ըստ III և IV հատվածների։

VII ՀԱՏՎԱԾ

ԿԱԹԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԵԼՈՒՅԹԸ ՅԵՎ ՎԵՐԱՄՇԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Մատնանշվում է կաթի ընդհանուր մուտքը և վերամշակման պլանն ըստ կվարտալների։

VIII ՀԱՏՎԱԾ

ԿԱԹՆԱՄԹԵՐՔՆԵՐԻ ԻՐԱՑՈՒՄԸ

2—6-րդ սյունակները լրացվում են համաձայն կաթի հանձնման պլանի։

7-րդ սյունակում ցույց են տրվում կամավոր կերպով առանձնացվող ֆոնդերը, համաձայն ընդհանուր ժողովի վորոշման (մանկամսուրների համար և այլն)։

IX ՀԱՏՎԱԾ

ԱՐՏԱԴՐԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔԸ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՖԵՐՄԱՅԻՆ ՏՐՎՈՒՄ Է

Այս սյունակը լրացվում է դաշտավարական բրիգադի առաջադրանքի VII հատվածի ձևով։

X ՀԱՏՎԱԾ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

1 և 2-րդ սյունակները լրացվում են «անասնապահական բրիգադի առաջադրանքի» VI և VII աղյուսակների պես։

XI ՀԱՏՎԱԾ

ԿՈԼՏՆՏԵՍԱԿԱՆՆԵՐԻ, ՔԱՇՈՂ ՈՒԺԻ, ԳՈՒՅՔԻ ՅԵՎ ԱՆԱՍՈՒՆՆԵՐԻ ԲԱՇԽՈՒՄԸ

Այս հատվածը լրացվում է այն ֆերմաներում, վորտեղ կան մեկից ավելի բրիգադաներ։ Այս աղյուսակը հանդիսանում է ամփոփում և կազմվում ֆերմայի բոլոր բրիգադների առաջադրանքները կազմելուց հետո։

Վոչխարաբուծական, խոզաբուծական, ձիաբուծական և մեղվաբուծական ապրանքային ֆերմաների առաջադրանքի ձևերը լրացվում են «կաթնաապրանքային ֆերմաների առաջադրանքի» ձևով։

ՀՀ Ազգային գրադարան
NL0937686

11
28134

ИНСТРУКЦИЯ

по составлению произв.-фин. планов колхозов на 1934 г. и по даче производственных заданий бригадам и тов. фермам.

Сельхозгиз 1933 Эривань